

1981; 1982
1983; 1984

Blingsby

85-87

Blingsby

84

۷۷۱۰

659

Printed in Turkey

50

47

235.

0-45

ՍՈՒՐԲԻ

ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

Խ



ԳՐԵՑ

Ա. Կ. Ս Կ Բ Լ Ա Ա Ն



~~~~~  
معارف عمومیه نظارت جلیله سنک ٤ محرم ٣١٠ و ١٦ توز  
٣٠٨ تاریخی و ٥٧١ نومرول رخصتماه سیله نشر او نشدر

~~~~~  
مصارف آمریقان مسیو ز شرکتی طرفندن تسویه اولن درق طبع او نشدر

ԿՈՍՏԱԴԻՆՈՒՊՈՂԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ԶԱԿՈՒ ՊՈՅԱԶԵԱՆ

1892

ՍՈՒՐԲ

ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

Ա. ՇՐՋԱՆ



Printed in Turkey

ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Ց. Տ. 347—386

Սուրբն Յովհանն, որ իւր պերճախօսութեան պատճառաւ Ոսկեբերան տիտղոսն առաւ, ծնաւ յԱնտիռք, Ց. Տ. 347, հարուստ և տոհմիկ ընտանեաց մէջ: Իւր հայրը՝ Սեկունտոս՝ Հռոմէական կառավարութեան առաջնակարգ պաշտօնեաներէն մին էր և անուանի իւր զինուորական ծառայութեամբ: Ամբողջ Հռոմէական պետութեան մէջ յայնժամ իրարուհետ մրցող չորս անուանի և բարգաւաճ քաղաքներն էին Հռոմ, Կ. Պոլիս, Աղեքսանդրիա և Անտիոք: Այս վերջինը թէպէտ մեծութեամբ չէր հաւասարեր Հռոմայ և Կ. Պոլսոյ, կը գերազանցէր զԱղեքսանդրիա: Իսկ իւր մեղմ և հաճելի կլիմային կողմէ առաջին տեղը կը բռնէր ամբողջ աշխարհի վրայ: Կա-



590 | 84-2015
39 | ԱՊՀԿ
q -

2001

ոռոցեալ Որոնդէս գետին ափանց վրայ : Վոքը
ինչ հեռի ծովեղրէն և շրջապատեալ գեղա-
տեսիլ լեռներով որք զարդարուած էին դափ-
նիներով, մրտենիներով և ուրիշ մշտադալար
բոյսերով, ստուգիւ յոյժ չքնաղ էր Անտիոք,
ուր կու գային կը խռնուէին աշխարհի ամէն
կողմէ զուարճասէրներ : Հարուստ էր քաղաքն
և յաջողակ, վասն որոյ զարմանալի չէ որ յե-
տին աստիճան գեղխութիւն և շուայտութիւն
կը տիրէր հօն : Ոսկերերանի ժամանակ Ան-
տիոք ունէր իբր 250,000 բնակիչ որոց իբրև
կէմն էին Քրիստոնեայ :

Զարմանալի իրողութիւն է թէ կանայք
շատ աւելի կը յարէին Քրիստոնէութեան և
իրենց բարի վարուք մեծ ազդեցութիւն ի գործ
կը դնէին արանց վրայ յօգուտ Քրիստոնէական
կրօնին . այնպէս որ Լիբանիոս, այն դարուն
անուանի ճարտարախօսն յԱնտիոք, կ'ողբար
Յունական դից և դիցազանց կրօնն, և կը
յանդիմանէր ժողովուրդը կծու լեզուաւ, որ
փոխանակ Պղատոնի և Պիւթագորայ կրօնին՝
կ'ընդունէին իւրեանց մարց և կանանց կրօնն,
այսինքն՝ Պիրիստոնէութիւն : Հայրեր, անհոգ
իրենց զաւակաց կը թութեան մասին, յաճախ
կը պարծէին նոցա անառակութեամբ . մարք
և թ կը կը թէին իւրեանց զաւակներն բարո-
յականի և ճշմարտութեան մէջ :

Այս բարեպաշտ և առաքինի կանանց ա-

մենէն աւաջիններէն էր Անթուսա, Ոսկերե-
րանի մայրը : Ազնուական ընտանիքէ սերած
էր նա . 20 տարեկան դեռատի հասակին
մէջ, մինչ նոր յաշխարհ բերած էր զՅով-
հան, Սեկունտոս մեռաւ : Մանկամարդ այրին
հրաժարեցաւ աշխարհային բոլոր հաճոյքներէ ,
իւր կրնակը դարձուց անոնց որ կը ինդրէին
իւր ձեռքը, և ինքինք նուիրեց իւր դեռա-
հասակ որդւոյն կը թութեան : Ստուգիւ Ոսկե-
բերան իւր նախնական կը թութիւնը և իւր
անրիծ և անյողդողդ բնաւորութեան սկզբուն-
քը կը պարտի Անթուսայի որ իբրև բարե-
պաշտ Քրիստոնեայ հոչակ հանած էր ամբողջ
Անտիոքայ մէջ : Կը պատմուի թէ երբ Յովիան
պատանին զառաջինն դնաց անուանի ճարտա-
սան Լիբանիոս սովիեստեսին քով իբրև ու-
սանող, հեթանոս վիլիսովուն հարցուց նմա-
թէ ո՛վ էր և որո՛ւ զաւակ . և երբ իմացաւ
թէ Յովիան որդին է այնպիսի կնոջ մը որ
հիմա հազիւ քառասուն տարեկան է և քսան
տարիէ ի վեր այրի է մնացած՝ նուիրելով
ինքինք իւր որդւոյն դաստիարակութեան ,
ապշեցաւ և իւր աշակերտներուն դառնալով,
դոչեց . “Ո՛վ սքանչելեցաւ, ի՞նչ ընտիր կա-
նայք ունին այս Քրիստոնեայք : ” Զայս ըսաւ
Լիբանիոս որ, իբրև հեթանոս ճարտասան ,
միշտ հակառակ կը խօսէր Քրիստոնէից :

Անթուսա աշխատեցաւ շատ բարձր դաս-

տիարակութիւն տալ իւր որդւոյն. չէր շատա-
նար միայն լատիներէնով և օրէնսդիտութեամբ
որք սովորական ուսմունքն էին այն դարուն՝
ստանալու համար բարձր դիրք. ոչ ալ ուզեց
նուիրել իւր զաւակը կղերականութեան կամ
վանականութեան ինչպէս կ'ընէին շատ մարք
այն դարուն մէջ։ վստահ էր իւր որդւոյն
բարուց վրայ, և չվարանեցաւ դրկել զնա
մինչեւ իսկ հեթանոսի մը դպրոցը։ Լիբանիոսի
քով ընդհուպ հոչակ հանեց Յովհան իրեւ
ճարտասան։ «Քրիստոնեայք գողցան զթով-
հան մենէ, » կ'ըսէին նոյն դարու հեթանոս
Յոյները։ Անդամ մը երբ հարցուցին Լիբանեայ
թէ զո՞վ կ'ուզէր որ իրեն յաջորդէր, պա-
տասխանեց. «Յովհան պիտի ըլլար ինձ յա-
ջորդ, եթէ Քրիստոնեայ չըլլար»։ Խեղճ սո-
վեստ, արդեօք կ'երևակայէր թէ պատանին
Յովհան փառաց ի փառս պիտի բարձրանար,
մինչ իւր անունն ի մոռացօնս պիտի մատնուէր։

Յովհան Լիբանեայ հակաքրիստոնէական և
կոռապաշտական դաղափարաց դիմադրեց իւր
մօր ազգեցութեամբ և մանաւանդ Սր. Գրոց
ուսմամբ, ուսում՝ որ յետոյ այնչափ լաւ ներ-
շնչեց զինք իւր բոլոր գրութեանց մէջ։ Հե-
թանոս գրագիտին քով իւր գրական ուսումն
աւարտելէ ետքը, Յովհան փաստաբանութեան
ձեռնարկեց ուր առաւել ևս կրնար զարդացը-
նել իւր պերճախօսութիւնը։ Բայց չիրեց այս

չափաղանց աշխարհային արուեստը, յորմէ
հրաժարելով՝ ուզեց տալ ինքզինք հոդեսոր
խոկմանց։ Այս մասին մեծապէս ձեռնտու ե-
ղաւ նմա վեհափառ ծերունին Մելիտոս եպիս-
կոպոս։ Մելիտոս Հայ էր, ծնեալ ի Մելիտինէ
(Մալաթիա)։ Պարկեշտ և հեղահամբոյր բնա-
ւորութեամբ օժտեալ ծերունաղարդ եկեղե-
ցական էր նա։ Նախ Սեբաստիա քաղաքին
եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, բայց հերետի-
կոսական հերձուածութեանց պատճառաւ չկա-
րենալով կենալ հոն՝ Անտիոքայ եպիսկոպոս
ընտրուեցաւ յամին 360։ Յովհան երեք տա-
րի Քրիստոնէական ուսում առաւ այս հայ ե-
կեղեցականին քով, և ապա նորա ձեռամբ
մկրտուելով նուիրեց ինքզինք հոդեսոր գործի։
կ'ուզէր անապատական և մենակեաց լինել,
բայց իւր մայրն չէր ուզեր որ իւր միամօր որ-
դին լքանէ զինք և երթայ լեռները ճգնել։
«Ուանձնանալ և հոդեսոր մտածութեամբ պա-
րապի՞լ կ'ուզես, » կ'ըսէր նմա Անթուսա, «ա-
հաւասիկ տունը. տան մէջ ըրէ ինչ որ կ'ու-
զես լինել, բայց մի՛ թողուր զիս մինակ և
չուառ։ » Մելիտոս եպիսկոպոս ալ յորդորեց
զՅովհան Աքանել իւր վշտակիր մայըը։

Յամին 370 Արիոսեանց աղանդն, որ կ'ու-
րանար Քրիստոսի աստուածութիւնը, զօրանա-
լով Անտիոքայ մէջ՝ զՄելիտոս աքսորեց իւր
հայրենի երկիրը։ Անոր տեղ կային բարեպաշտ

երէցներ ընդ որս անուանին Դիոդորոս . աս
մեծ մխիթարիչ նաև ուսուցիչ եղաւ Յովհան-
նու իւր առանձնութեան մէջ : Առանձնութիւ-
նը շատ աւելի լաւ կը գտնէր Յովհան քան
աշխարհ մտնելը : Այս միջոցին էր որ չերմ
պաշտպան կանգնեցաւ մի քանի վարդապե-
տութեանց դորս յետոյ լքաւ . ինչպէս չամուս-
նանալ, ապաշխարանք քաշել, կամ մարմինը
չարչարել, և չխօսիլ : Կ'ըսուի թէ յաճախ օ-
րերով և շաբաթներով կը նստէր առանց
բառ մը արտասանելու : Այս միջոցին շատ մը
թախանձական հրաւերներ եկան Ոսկերերանի
և իւր բարսեղ ընկերով որ դան և եպիսկոպոս
լինին : Ինք ետ կեցաւ, յորդորելով զբարսեղ
որ երթայ : Բարսեղ հաւանեցաւ եպիսկոպո-
սանալ, պայմանաւ որ նա ևս ընկերանար :
Ոսկերերան խոստացաւ, բայց երբ ձեռ-
նադրութեան օրն եկաւ, պահութեցաւ,
թողով զբարսեղ միայնակ լինել եպիսկոպոս :
Այս վերջինս ապա բողոքեց Ոսկերերանի սոյն
“խարդախութեան”, դէմ : Այս դանդատանաց
պատախանեց Ոսկերերան “Յաղագս Քահա-
նայութեան”, անուն ընտիր երկասիրութեամբ
որ ցայս օր ժամանակի քննադատից սքան-
չացման առարկայ եղած է :

Այս միջոցին պատահած դէպք մը մեծ
ազդեցութիւն ըրաւ Ոսկերերանի մտաց վրայ,
ինչպէս ինքն ալ կը յիշէ յետոյ իւր մի քա-


րողին մէջ : Վաղէս կայսր յոյժ խիստ հրաման
մը հանած էր ընդդէմ մոդութեան . որու
քով որ սոյն գաղտնի արուեստին վերաբերեալ
դրութիւնք կամ այլ ինչ գտնուէին՝ վայ այն
անձին : Օր մը մինչ Ոսկերերան և իւր ընկերը
թէոդորեառոս կը պտըտէին Որոնդէս գետին
եզրը, ջրին մէջ սպիտակ բան մը նշմարեցին :
Թանկագին բան մը կարծելով թէոդորեառոս
վերցուց զայն ջրին մէջէն . վայ դժբաղդու-
թեանս, մագաղաթ մ'էր սա մոդական գրուա-
ծովք : Յանկարծ զինուոր մը երևան ելաւ,
լրտես մը, մոդական դրութիւններ փնտուող
պաշտօնեայ մը : Ոսկերերան և իւր ընկերը
կորառուած էին, սարսափ և ահ ու դող պա-
տած էր զերկուան ալ : Զէր մնար իրենց այլ
ինչ, բայց միայն նետել դրութիւնն ի ջուր ա-
ռանց ցուցնելու զայն : Զայս յաջողեցան ընել,
բայց նախախնամական դիպուած մը համարե-
ցաւ զայս Ոսկերերան և յետ այնորիկ աւելի
չերմ փափաք ունեցաւ նուիրել իւր կեանքն
Աստուծոյ :

Թուի իւր մօր մահուանէն յետոյ, որ հա-
ւանականաբար տեղի ունեցաւ յամին 374,
Ոսկերերան որդեգրեց անապատականութիւնը
ուր ինքզինք տուաւ Սր. Գրոց և իւր ներ-
քին մարդուն ուսման : Այն ժամանակի անա-
պատականք կամ ճգնաւորք պարզ կեանք
վարող աշխատասէր և աղօթասէր մարդիկ

էին և կը բնակէին քարայրներու և հիւղակներու մէջ։ Հատորներ գրեց Ոսկեբերան ի պաշտապանութիւն վանականութեան ընդդէմ զեղիս և անքարոյական կենաց և անոր շուայտութեանց։ Վեց տարի անապատական կեանք վարեց, մանաւանդ վերջին երկու տարիներն չարաշար կը ճգնէր քարայրի մը մէջ^(*), յորմէ մեծապէս խանդարելով իւր առողջութիւնը, ստիպուեցաւ լեռնէն յԱնտիոք դառնալ, յամին 380։ Մելիտոս եպիսկոպոս, որ վերադարձած էր աքսորէն, սարկաւագ կամ դրակարդաց ձեռնադրեց զՅովհան։ այս թեթև պաշտօնի մէջ բոլոր աւելորդ ժամանակը կուտար զանազան կրօնական երկասիրութիւններ յօրինելու և վշտացելոց միջիթարական թուղթեր գրելու, որոց ոմանք տակաւին կը գտնուին։ Այս միջոցին էր որ գրեց յոյժ ընտիր երկասիրութիւն մը Բաբել մարտիրոսին վրայ որոյ մարմինն ամիփուռած էր Դավինեայ անտառին մէջ։ Դավինին էր Անտիոքայ արուարձանաց միոյն մէջ անտառ մը որ աշխարհի ամենէն հաճելի վայրը կը սեպուէր ի հնումն։

(*) Անտիոքէ չըս ժամ հեռաւորութեամբ վանք մը կայ, Աբ. Յովհան Ոսկեբերան անուամբ, Պիթիս գիւղին մէջ։ Այս էր, Կ'ըսեն, սրբայն ճգնած վայրը։ Ամբողջ գիւղն հայաբնակ է, և վանքն, որ յոյժ հածելի դիրք ունի, կը վերաբերի Հայոց, բայց բոլորոսին աւերակ է, ինչպէս շատ ուրիշ վանօրապէ Հայոց։

Ժամանակաւ նուիրուած էր Ապողոնի, և բոյն էր մեղկութեան և անառակութեան։ իսկ Ոսկեբերանի ժամանակ, ի նշան Քրիստոնէական յաղթութեան, Բաբել մարտիրոսին մատուռն կառուցուած էր անդ փոխանակ կռապաշտական Ապողոնին։ Յուլիանոս ուրացող կայսր 362ին այլուր փոխադրել տուաւ Բաբելայ ոսկերոտիքը, և անդ հաստատեց Ապողոնեան պաշտօնը։ բայց այս փոխասութենէն քիչ ետքը Դավինին այրեցաւ։ Քրիստոնեայք զայս նկատեցին իբրև արդար պատիժ երկնային ցասման։ Ոսկեբերանի սարկաւագութեան միջոցին գրած երկասիրութիւններէն են նաև երկու հատորք, զղման և ապաշխարութեան վրայ, որք յոյժ գեղեցկահիւս դրուածներ են։



հուալ մեծ հուչակ հանեց . ամէն կարգէ մարդիկ կը խոնուէին եկեղեցին , կը ժողովէին բեմին մօտ որ բառ մը չկորուսանեն : Յաճախ երբ ուղէր վերջացնել քարոզը՝ աւելի բուռն ծափահարութիւններ կը ստիպէին զինք շարունակել : Քարոզներէն զոմանս խնամով կը դրէր , զոմանս յետ պատրաստութեան՝ բերնուց կը խօսէր , խկ զոմանս յանպատրաստից՝ պարագաներէն ներշնչուելով կը խօսէր : Անդամ մը մինչ յանպատրաստից կ'երթար յեկեղեցի , հրապարակին վրայ պատամանց մէջ : Երբեմն օրուան մէկ ժամուն եպիսկոպոսը կը քարոզէր և միւս ժամուն Ոսկեբերան . ընդհանրապէս շաբաթը երկիցս , շաբաթ և կիւրակէ օրեր , կը քարոզէր : Յաճախ եպիսկոպոսը համառօտ ուղերձ մը միայն կ'ընէր և ապա կը հրաւիրէր զՈսկեբերան որ քարոզէ . և արդէն ժողովուրդը մեծ անձկութեամբ կը սպասէր իրեն որ բեմն ելնէ : Երբեմն կը պատահէր որ առաւտուն կանուխ քաղքին մի հեռաւոր թաղին ժողովատեղւոյն մէջ խուռն բազմութեան մը քարոզէր և ապա դառնար յեկեղեցի , որպէս զի ինքը քարոզ լսէր , բայց անդ նորէն կը հրաւիրուէր ի բեմ և կը ստիպուէր նորէն քարոզել : Ընդ

Յամին 387 , Թէոդոսիոս կայսր հրովարտակ մը հրատարակեց որով մեծամեծ տուրքէր կը պահանջէր Սնտիոքացիներէն : Բոլոր բնակիչք , այս լուրէն ահարեկեալ , մեծ և փոքր , խոնուցան եկեղեցին . ապա կառավարչին դիմեցին որ մեղմացնէր պահանջը . բայց անօդուա :

Բ. ՇՐՋԱՆ

ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԵՐԻՅՈՒԹԻՒՆԸ

Յ. Տ. 386—398

Ոսկեբերան իբրև սարկաւագ կամ գրակարդաց չունէր պատեհութիւն ի կիր արկանել իւր ճարտարաբանութեան և հրապարակախօսութեան եղական ձիրքը : Մելիտոս վախճանեցաւ յամին 381 . նորա յաջորդը ֆլարիանոս իւր խակ եկեղեցւոյն երէց ձեռնադրեց զՅովհան որ կ'օգնէր եպիսկոպոսին իւր պաշտամանց մէջ : Երբեմն օրուան մէկ ժամուն եպիսկոպոսը կը քարոզէր և միւս ժամուն Ոսկեբերան . ընդհանրապէս շաբաթը երկիցս , շաբաթ և կիւրակէ օրեր , կը քարոզէր : Յաճախ եպիսկոպոսը համառօտ ուղերձ մը միայն կ'ընէր և ապա կը հրաւիրէր զՈսկեբերան որ քարոզէ . և արդէն ժողովուրդը մեծ անձկութեամբ կը սպասէր իրեն որ բեմն ելնէ : Երբեմն կը պատահէր որ առաւտուն կանուխ քաղքին մի հեռաւոր թաղին ժողովատեղւոյն մէջ խուռն բազմութեան մը քարոզէր և ապա դառնար յեկեղեցի , որպէս զի ինքը քարոզ լսէր , բայց անդ նորէն կը հրաւիրուէր ի բեմ և կը ստիպուէր նորէն քարոզել : Ընդ

Մեծ խոռվութիւն ծագեցաւ, մանաւանդ քանի մը խաղամոլ դատարկապորտներու պատճառաւ ։ Յուղեալ ժողովուրդը դիմեց եպիսկոպոսին որ իւր միջամտութեամբ թեթևայնէր հրովարտակին պահանջը ։ Զգտնելով զեպիսկոպոսն իւր բնակարանին մէջ, կատաղի ամբոփին սպառնացաւ յաւարի տալ կառավարութեան ապարանքը ։ Ապա մեծ հրապարակին երթալով քանդեց տապալեց կայսեր, կայսրուհւոյն և երկու արքայազուն իշխանաց, Արկադեայ և Ռոնորեայ, կիսանդրիները, նախատալից և հայհոյական խաղեր կանչելով ։ Ապա մոլեգնեալ խուժանը քաղաքին իշխանաց միոյն տունը կրակի տուաւ ։ ուրիշ շատ եղեռներ գործուելու վրայ էին երբ յանկարծ գումարտակ մը զօրք վրայ հասաւ, և ապստամբութիւնը զսպեց ։ Գլխաւոր մեղսակիցներ, արք և կանայք, անմիջապէս ի կախաղան հանուեցան կառավարչին հրամանաւ ։ Բայց այս չէր բաւական շիջուցանել թէոդոսի բարկ զայրոյթն ընդդէմ ապստամբութեան մը յորում կայսերական ընտանեաց արձանք ոտնակոյս եղան ։ Անմիջապէս սուրհանդակիներ զրկուցան գուժել եղելութիւնն ի կ. Պոլիս ։ Յետին աստիճան սարսափի մէջ էր քաղաքը ։ դեռ կայսեր հրամանը չհասած՝ մեծ և աղեցիկ մարդիկ փախան քաղաքէն ընտանեօք ։ ուսուցիչներ, ուսանողներ և ամէն կարգէ մար-

դիկ փութացին ի փախուստ ։ Խոռվութեան առաջին եօթն օրերը չխօսեցաւ Ոսկեբերան, մինչև որ տեսաւ թէ ժողովուրդը փափաքելով կը փափաքէր ։ Յայնժամ մեղրածաւալ պէր ճախօսութեամբ քարողեց Քրիստոնէական մը խիթարութեան վրայ և յորդորեց զժողովուրդն զզալ ։ Բաղմութիւնն՝ ի լուր այս հրեշտակային բարբառոյն՝ սրտատրոփ սկսաւ ծափահարել ։ «Զեր ծափահարութիւնները չեն որ կը պահանջեմ ձեղմէ ,,, կ'ըսէր նա, «այլ որ իմ խօսքերս կատարէք ,,, Փլարիանոս եպիսկոպոս հակառակ իւր ծերութեան՝ անձամբ փութաց ի կ. Պոլիս, աղաչել զկայսրն ։ Մեծ պահք եւ կած էր, գալքեցան զքօսանք, և ժողովուրդն սկսաւ յաճախել Աստուծոյ տունը ։ Ահա այս միջոցին, այս պարագայից տակ էր որ Ռուկեբերան արտասանեց «Քարողք առ Անտիոքացիս», կամ «Անդրիանտականք» կոչուած հրաշագեղ քարոզները, որք ստուգիւ հրաշակերտներ են բեմբասացութեան պատմութեան մէջ ։

Փլարիանոս չհասած ի կ. Պոլիս, կայսրն ի մացաւ եղելութիւնը և երկու պաշտօնատար զրկեց յԱնտիոք քննութիւն կատարել ։ Յետին աստիճան խստութեամբ պատժուեցան յանցաւորաց հետ ի միասին անմեղներ ևս ։ արհաւերք գործուեցան, մեծահարուստ և աղդեցիկ քաղաքայիններ, որք ամենայնիւ անմեղէնն էին, կամ գանակոծուեցան, կամ շղթայա-

կապ ի բանտ տարուեցան և կամ չարաջար տանջանօք գլխատուեցան։ Յոյժ սրտաճմիկ տեսարան մը կը ներկայացնէր դատարանին դափիթը, ուր հաւաքուած էին դատապարա տեղոց ազդականք և բարեկամք։ Մենակեաց ճգնաւորներ և անապատականներ, որք ցայն վայր քարայրի մէջ կը բնակէին ի լերինս, փութացին ի քաղաք՝ աղատել իրենց եղբայրները։ Ճգնաւոր Մակեդոնացին, որ ալեզարդ ծերունի էր, փողոցին մէջ դիմաւուեց դատաւորները, որք ձիու վրայ հեծած կ'երթային, և նոցա քղանցքէն բռնելով ստիպեց զնոսա վար իջնել։ Վեհափառ ծերունւոյն կերպարանքէն ազդուելով, դատաւորք վար իջան։ Ծերունին սապէս խօսեցաւ. «Ըսէք կայսեր, սիրելիք, թէ ինքն ալ մարդ է որ ստեղծուած է ի պատկեր Աստուծոյ. դիւրին է պղնձէ արձանի մը յար և նման ձու լել հաղար հատ, բայց անհնարին է սպանեալ մարդու մը միակ մազը ողջնյնել, „ և այն։ Այս և ուրիշ ճգնաւորաց սոյնպիսի առաջարկութիւնք մեծ ազդեցութիւն ի գործ դրին դատաւորաց և այլ պաշտօնատարաց վրայ, որք խոստացան աղաչել զկայսրն ի նպաստ Անտիոքացւոց։ Այս եղելութիւնք առատ նիւթ կը մատակարարէին Ոսկերերանի պերճախօսութեան, որ կը թնդացնէր զեկեղեցին առաջի խուռն բազմութեան։

ՀԿ-ՀԵՒՏ

Վերջապէս պատիժ տնօրինուեցաւ Անտիոքաց որ զրկուեցաւ իւր դիրքէն իրեւ մայրաքաղաք Սիւրիո։ Լաւոդիկէի՝ իւր դրացւոյն և նախանձորդին՝ տրուեցաւ սոյն պատիւ. Թատրոնը, կրկէսը և բաղանիքը, որ Անտիոքաց գլխաւոր զրօսատեղիներն էին, փակուեցան։ Երբ ունայնասէր Անտիոքացիք վիշտ կը յայտնէին սոյն առանձնաշնորհման և վայելմանց բարձման վրայ, Ոսկերերան յոյժ գողտը ոճով մը կը յանդիմանէր զնոսա և կը յորդորէր որ յաւէտ ուրախանան, վասն զի, կ'ըսէր, անբարոյականութիւն արտադրող միջոցներ բարձուեցան ի միջոյ Քաղաքի մը պատիւն, կ'ըսէր, իւր բնակչաց բարեպաշտութիւնն է. և կը թուէր այն առաւելութիւններն զոր ունեցաւ Անտիոք Առաքելոց ժամանակ ի մասին տարածման Քրիստոնէութեան։ Այսու պատեհութեամբ, Ոսկերերան յոյժ աղդու քարոզներ խօսեցաւ աշխարհիս անցաւոր փառաց և յաւիտենականութեան անվախճան երանութեան վրայ, յիշելով այն մեծատուն Անտիոքացիներն որ այժմ բանտերու մէջ կը հեծէին և որոց հարստութիւնք և ոչ մի ծառայութիւն կրնային մատուցանել իրենց։

Փլաբիանոս եպիսկոպոսին Զատկէն քիչ առաջ ի Կ. Պոլիս համնիլը շատ օդտակար եղաւ իւր գործոյն. Քրիստոնեայք սովոր էին դժուատ լինել յընթացս սոյն տօնին։ Կայսրն

Հրովարտակով մը աղատութիւն կը չնորհէր
բոլոր բանտարկելց, և անդամ մը “Երանի”
թէ կարենայի գլխատեալներն ալ յարուցա-
նել տալ, ըստ Փլաքիանի: “Այս բառեր, ”
ըստ Ոսկեբերան իւր մի քարոզին մէջ մինչ
կը հաղորդէր կայսեր հրովարտակն առ իւր
ժողովուրդն, “աւելի վայելչութիւն կը չնորհեն
թէոդոսիոսի քան իւր իսկ թագը. ինչո՞ւ մարդ-
զմարդ թշնամանէ, մինչ Տէրն մեր իւր կեանքը
տուաւ մարդոյ համար: ” Թէոդոսիոս կայսր
իւր իսկ ձեռօք նամակ մը դրեց առ Անտիո-
քացիս խոստանալով մոռնալ նոցա անցեալը.
Փլաքիանոս փութաց Զատկէն առաջ հասցու-
նել զայս նամակ: Յամին 387, Զատկին, Ոսկե-
բերան բեմէն ծանոյց այս ուրախալի լուրը: Ոս-
կեբերանի այս ոսկեղինիկ քարոզներն անպտուղ
չմնացին: Մեծ արթնութիւն եղաւ յԱնտիոք.
բազմաթիւ հեթանոսք գունդադունդ դիմեցին
յեկեղեցի և դիրիստոնէութիւն ընդունեցին:
Անհամար էր բազմութիւնն որ կը խոնուէր ե-
կեղեցին, և որոտընդոսատ ծափահարութեամբք
կը թնդացունէր նուիրական կամարներն ի
լուր մեծ չուետորին ոսկի բարբառոյն. բայց
Ոսկեբերան կ'ըսէր, “Մի՛ ծափահարէք զիս,
մի՛ գովէք պերճախօսութիւնս, այլ թող գործ-
նական ազդեցութիւն ընեն քարոզներս ձեր
կենաց վրայ: ”

Ահա այսպիսի փոյլուն յաջողութեամբ,

որ դուն ուրեք կը վիճակի մահկանացուաց,
Ոսկեբերան իբրև երէց պաշտօն վարեց յԱնտիոք
շուրջ երկոտասան տարի: Անշուշտ շահեցաւ
բազմաթիւ թշնամիներ, մանաւանդ մեծատուն-
ներէն, որոց համար սոսկալի կայծակներ էին
իւր քարոզք: Բայց իւր բարեկամք աւելի շատ
էին. ժողովրդին մեծագոյն մասն յարած էր
իրեն մեծ սիրով, ինչպէս նաև եպիսկոպոսը:
իբրև երէց, ժողովուրդը կառավարելու պա-
տասխանատուութենէ ազատ, կրնար մեծ յա-
ջողութեամբ շարունակել իւր հռետորական
գործը մինչև իւր կենաց վերջը: Բայց այսպիսի
հանճար մը և կրօնական եռանդով լի հոգի մը
պարտէր մեծագոյն ծառայութիւններ մա-
տուցանել Քրիստոնէական կրօնին: Առիթը
ներկայացաւ: Եւտրոպիոս, կայսեր հզօրագոյն
պաշտօնեայն, յընթացս իւր մի պտղատին զոր
կը կատարէր կայսրութեան մէջ, գնաց նաև
յԱնտիոք: Ապշեցաւ Ոսկեբերանի պերճախօ-
սութեան վրայ: Այն ինչ դարձաւ ի Կ. Պոլիս,
համոզեց զկայսրն որ փութար բերել տալ զիս-
կեբերան, որպէս զի հանգուցեալ պատրիար-
քին տեղ ձեռնադրուէր Կ. Պոլսոյ ընդհանուր
պատրիարք:

Գ. ՇՐՋԱՆ

ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՊԱՏՌԻԱՐՔՈՒԹԻՒՆԸ

Յ. Տ. 398—404



Եթէ ուղղակի առաջարկէին Ոսկեբերանի որ երթար Պատրիարք լինել ի կ. Պոլիս, յայտնի էր թէ պիտի հրաժարէր այդպիսի պաշտօն մը ստանձնելէ, և կամ գոնէ մեծ խոռովութիւն յառաջ պիտի գար Ծնտիռքացւոց մէջ որք պիտի չուզէին բամնուիլ իրենց միրեկի երէցէն։ Այս դժուարութեանց առաջքն առնելու համար Արկադիոս կայսր լուր զրկեց Ոսկեբերանի թէ կարեոր բանի մը համար իրեն հետ տեսակցելու նպատակաւ յատուկ պաշտօնեայ մը կը զրկէ, թող անյապաղ դիմաւորէ զնա Ծնտիռքայ պարիսպէն դուրս։ Այն ինչ Ոսկեբերան դուրս ելաւ իւր որորան քաղաքին որմերէն՝ դրուեցաւ իկառս որոյ անհւեք արագ արագ գլորեցան սահեցան դէպ ի պանծալի մայրաքաղաքն արևելեան կայսրութեան։ Այս եղաւ 397 ին վերջերը. Ոսկեբերան իւր յիսուն տարեկան էր յայնժամ։

Իւրեւ Արքեպիսկոպոս կամ Պատրիարք կ. Պոլսոյ՝ ամենէն նախանձելի դիրքն ունէր, որ յետ կայսերական գերդաստանին բարձրագոյնն

էր։ Իւր պերճախօսութիւնն աւելի ի հանդէս բերին երկրաշարժ մը և հեղեղ մը, որք շատ կործանում և վիշտ պատճառեցին ի կ. Պոլիս և ի շրջակայս։ Կայսերական տօնախմբութեան մը առթիւ կարի մեծ հոչակ հանեցին իւր հոեւտորական ճառախօսութիւնք։ Եւդոքսիա թագուհին և Եւտրոպիոս՝ կայսրութեան առաջին պաշտօնեայն, ինչպէս նաև անհամար բազմութիւն արանց և կարանց, կը խոնուէին յեկեղեցւոց սնանելու համար անոր մեղրածաւալքարոզներով և թնդացունելու համար սրբատերէնին իւրեանց մոլեգին ծափերով։ Գրեթէ կը պաշտէին զնա. այն փառքը զոր Ոսկեբերան կը վայելէր իւր պաշտօնավարութեան սկիզբներն՝ հազիւ ուրեք վիճակած է մահկանացուաց վայելել։ Արդ, հրապուրուած և շացած այն պատիւներէն զորս կը շոայլէին իրեն, եթէ շեղէր իւր սովորական պարզասիրութենէն և անկեղծութենէն, շատ զարմանալի պիտի չլինէր։ Բայց Ոսկեբերան, հեռի այդպիսի շացումէ, բոլոր իւր հոեւտորական ճարտարութեամբ կը հարուածէր կ. Պոլսոյ զեղսութիւնը, մանաւանդ մեծատանց մէջ։ Իւր ժողովրդականութիւնը չափազանց մեծ էր, այնպէս որ չէին ուզեր որ իրմէ զատ ուրիշ մարդ ելնէր իւրեմն։ Անդամ մը իւր տեղ գաղատիոյ ծերունի եպիսկոպոսն հրաւիրեց քարոզել. սակայն ժողովրդեան սուլելէն և անարդելէն

իւեղճ ծերունին ստիպուեցաւ վար իջնել բեմէն, ուր Ոսկեբերան ինքն ելնել պարտաւորեցաւ թէպէտ այսպէտ ժողովութղթը կը կախուէր նորա շրմներէն, թնդացնելով զեկեղեցին ծափահարութեամբ, Ոսկեբերան կը յանդիմանէր զանոնք այս ունայն ցոյցերուն համար որք ապաշխարութեան նշանակ չէին. և բոլորովին արդելեց ծափահարութիւնն յեկեղեցւոչ ։ “Ես կ'ուզեմ որ լաք առ ամօթոյ, և ոչ թէ ծափահարէք զիս, ։ կ'ըսէր յաճախ ։ Այս միջոցին էր որ Ոսկեբերան գոթական առաքելութիւն մը հիմնեց Քրիստոնէութիւն տարածել գոթացւոց մէջ ։ Աստուածաշունչը գոթերէնի թարգմանել տուաւ. անգամ մը եկեղեցւոյ մէջ արարողութիւնը գոթերէն ընել տուաւ, և ապա Աւետարանի ընդհանրական փրկարար զօրութեան վրայ խօսեցաւ ։

Ոսկեբերանի թշնամիներն սկսան շատնալ. կղերականք ձանձրացան ունենալէ այնպիսի գլուխ մը, որ կը բռնադատէ զիրենք զբաղիլ հոգեոր գործերով և թողուլ արբչիո զեղիսութիւնը և անառակութիւնը ։ Եւտրոպիոս տեսաւ թէ փոխանակ գիւրանսաց մեքենայի մը, այնպիսի մէկն հանած է յաթոռ Պատրիարքութեան, որ անդադար կը յանդիմանէ զինք իւր չարութեանց և բռնաւորութեանց համար ։ Եւդոքսիա կայսրուհին իւր չար վարմանց համար կը յանդիմանուէր, և փոխանակ

ըեկարգելու ինքինք՝ թշնամացաւ Ոսկեբերանի ։ Հակառակ այս ամենայն դիմադրութեանց ոչ երբեք շեղեցաւ նա իւր ընթացքէն ։ Երկու նպատակ ունէր. նախ՝ անաղարտ պահել զուտ Քրիստոնէական վարդապետութիւնը Եկեղեցւոյ մէջ, և երկրորդ՝ իւր կեանքն իբրև ընտիր օրինակ ներկայել այլոց ։ Առաջինն ըրաւ ազատօրէն դատապարտելով բոլոր զանոնք, կղերական թէ՛ աշխարհական, որք կը գործէին հակառակ ուղղափառութեան ։ Երկրորդն ըրաւ՝ օրինակ հանդիսանալով իւր իսկ պարզ կենցաղավարութեամբ ։ Հրաժարեցաւ պատրիարքական սովորական ճոխութիւններէ, և այս կերպիւ խնայեալ գրամք գործածեց յօդուտ ազգատաց, անկելանոցներ և հիւանդանոցներ հիմնելով. հարուստներն ալ ստիպեց որ իւր օրինակին հետևին ։ Ի մէջ այն հարուստ անձանց, որք Ոսկեբերանի յարեցան, էր աղնիւ կին մը, Ողիմպիադա ։ Սա իւր վեշտասանամեաց հասակին մէջ ամուսնացած էր Ներքիստիոս իշխանին հետ. բայց քսան ամիս ետքը այրի մնալով սարկաւագուհի ձեռնադրուած էր Ոսկեբերանի նախորդէն՝ Նեկտարիոս Պատրիարքէն ։ Այս յոյժ առատաձեռն և ալզատասէր կինը շերմեռանդն սիրով յարեցաւ Ոսկեբերանի մինչեւ իսկ երբ այս վերջինս մեծամեծ դժուարութեանց էր մատնուած ։

Ոսկերերանի թշնամիք կ'ըսէին թէ չա-
փաղանց հպարտ է նա իւր վարմանց մէջ։
Այսու պիտի իմանանք անշուշտ իւր ընտիր
վեհանձնութիւնը, զի ոչ երբեք կը շոյէր կը շո-
ղոմէր հարուստները։ Եւտրոպիոս մեծ նախաւ-
րարն յոյժ հակառակեցաւ Ոսկերերանի և
ընդհանուր Եկեղեցւոյն որ իրեն ապաստա-
նողները կը պաշտպանէր։ կ'ուղէր քանդել
նորա առանձնաշնորհութիւնները։ Բայց նոյն
գոռող Եւտրոպիոս իւր կծծութեան և հարը-
տահարութեան պատճառաւ բազմաթիւ թշնա-
միներ շահեցաւ, որք ձգել տուին զինք իւր
փառքէն։ Ամենուն առջև ատելի էր. և վեր-
ջապէս ինկաւ մոլեգին ամբոխին ձեռքը որք,
ծարաւի նորա արեան, սկսան հալածել զնա-
Ռուր կրնար դիմել ազատելու համար արեն-
արբու խուժանին սուրերէն։ Դիմեց Եկեղեց-
ւոյն, այն Եկեղեցւոյն զոր այնչափ թշնամա-
նած և նախատած էր։ Հոս ի յայտ Եկաւ Ոս-
կերերանի երկնային անյիշաշարութիւնը, երբ
ամենայն վեհանձնութեամբ ընդունեց զիւտ-
րոպիոս և իւր հրեշտակային պերճաբանու-
թեամբ հանդարտեցուց կատաղի ամբոխն, ըն-
տիր քարող մը խօսելով նոյա “Բարի արա-
րէք ատելեաց ձերոց”, համարին վրայ։ Եւդոք-
սիա կայսրուհին այրի կնոջ մը այդին դրաւեց
յանիրաւի, որ կը յիշեցնէր Աքասարի կնոջ
Յեղաբելի գրաւելն Նաբովդի այդին։ Ոսկե-


բերան նամակ գրեց կայսրուհւոյն և ետ պա-
հանջեց այդին։ Այս կատղեցուց զիւդոքսիա
որ նորանոր թշնամութիւններ սկսաւ նիւթել
անոր դէմ։ Հետևեալք են մի քանին այն
յանցանաց որովք իւր թշնամիք կ'ամբաս-
տանէին զնա։ 1. Հերետիկոսական դաղափար-
ներ ունին։ 2. իւր քարոզներուն լեզուն յոյժ
բարձր և բանաստեղծական է։ 3. Առանձին կը
ճաշէ առանց սեղանակիցներ ունենալու։
4. Զղալ և ապաշխարել միշտ հնար է կ'ըսէ։
5. Կղերականաց հակառակ կը խօսի։ 6. Թէո-
փիլոս, Աղեքսադրիոյ հայրապետը, որ եպիս-
կոպոս ձեռնադրած էր զիսկերերան, կ'ըսէր
թէ իրեն բանադրածներն ընդունած է, և
այն, և այն։ Ոսկերերանի թշնամիք ժողով
մը կամ Սինոդ մը գումարեցին բաղկեղոնի
“կաղնի”, կոչուած թաղին մէջ, վասն որոյ սոյն
ժողով “կաղնոյ Ժողով”, կ'անուանի ի պատ-
մութեան։ Պահանջնեցին որ Ոսկերերան իբրև
ամբաստանեալ ներկայանար ժողովոյն և պա-
տասխանէր իրեն դէմ եղած դանդատանաց։
Ոսկերերան մերժեց այդ պահանջն իբրև ա-
պօրէն։ Վասն որոյ ժողովս ալ միաձայն ո-
րոշմամբ պաշտօնանկ հոչակեց զնա ի պատ-
րիարքութենէ, և յանձնեց զիսկերերան քա-
ղաքական իշխանութեանց որպէս զի պատժուի։
Աքատոր էր պատիժը որում դատապարտուեցաւ
Ոսկերերան, բայց թուի թէ կառավարութիւնը

տակաւին լաւ չէր գիտեր թէ ի՞նչ մեծ էր նորա ազդեցութիւնը ժողովրդեան վրայ։ Երեք օր շարունակ լեփեցուն էին եկեղեցիք լսել նորա հրաժեշտի ճառը։ Մեծ խռովութիւն կ'ակնկալուէր։ Զայդ արդելելու համար Ոսկեբերան յօժարակամ յանձնեց ինքինք պաշտօնէից որք եկած էին ձերբակալել զինք։ Հալճեպով ինաւ փոխադրեցաւ և անտի նիկոմիդիոյ ծովեզրը։ Սակայն հետևեալ օրն աւելի ևս սաստկացաւ շփոթութիւնը։ Նոյն գիշեր ի կ. Պոլիս պատահած երկրաշարժ մը, իբրև երկնային ցաման նշան նկատուելով, աւելի ևս գրդուեց արդէն խռոված ժողովորդը։ Ժողովրդական այս մեծ յուղումն յառաջ երթալով կրնար ապստամբութիւն մը յառաջ բերել. վասն որոյ կայսրն ստիպուեցաւ յետո կոչել զԱսկերերան իւր աքսորէն։ Նորա վերադարձը կատարեալ յաղթանակ եղաւ։ Պրոպրոնտեայ (Մարմարա) և Վոսփորի մակերեսը ծածկուած էր նաւակներով, բոլորն ալզարդարուած դրօներով և խարոյիներով։ Ամենայն ուրեք նուագածութիւն և խրախճանութիւն կը լսուէր։ Կ. Պոլոյ ամբողջ ժողովուրդը, մեծէն մինչև փոքրը, թափած էր ի ծովեզր դիմաւորել իւր ոսկեբարբառ քարուզը։ Աէդ և խրոխտ թագուհին Եւդոքսիա, դիտելով բոլոր այս հանդէսը իւր պալատան դիտելով բոլոր այս հանդէսը իւր պալատան պատշամէն որ դժբաղդաբար այնպիսի դիրք

ունէր զի նա չէր կրնար չտեսնել զամենայն ինչ, աւելի ևս նախանձեցաւ ի տես իւր մեծ ոսկին սոյն փառաւոր ընդունելութեան։ Ժողովուրդն հոգեսոր երդերով և եկեղեցական արարողութեամբ տարաւ հանեց իւր քարոզին ի պատրիարքական դահ, և չուզեց հեռանալ մինչև խօսէր նա քարոզ մը այն աթոռէն, յորմէ զնա վար իջեցնել յանդգնած էին իւր թշնամիք։

Հաղիւ վեց ամիս կրցաւ կենալ Ոսկեբերան այս անդամ ի կ. Պոլիս։ Թշնամիք պնդեցին թէ այն որ Սինոդի մը կողմէ պաշտօնանկ եղած է, չկրնար պաշտօն վարել մինչև որ մեծագոյն Սինոդ մը արդարացնէ զնա։ Ոսկեբերան պահանջեց ուրիշ Սինոդի մը գումարումը, բայց այդ լընդունուեցաւ։ Սոյն միջոցին Սբ. Սոփիայի մօտ Եւդոքսիայի արծաթեայ արձանը կանգնեցին, և այդ առթիւ եղած հանդէմներ մեծապէս խռովեցին եկեղեցւոյ մէջ քարողութիւնը։ Ոսկեբերան շատ նեղուեցաւ։ Այդ միջոցին էր որ արտասանեց իւր հոչակաւոր քարոզն յորում կ'ըսէ, «Հերովդիադաւ կաքաւէր, դարձեալ իշրնդարէր զգլուխ Յովհաննու Մկրտչի։» Եւդոքսիա այս խօսքերն իրեն վրայ առաւ։ կը կատղէր և կը մոնչէր։ «Ա.քսոր չգնացած Յեղաբեկինը մանցուց զիս, հիմա ալ Հերովդիադաւ կ'անուանէ զիս։» Պահանջեց կայսրէն այս անդամ ան-

դառնալի կերպիւ աքսորել զՈսկեբերան։ Ար-
կադիս թոյլ մարդ էր և չէր կրնար չհամա-
կերպիլ իւր կնոջ որ մեծ ազգեցութիւն ունէր
քաղաքական գործոց վրայ։



Դ. ՇՐՋԱՆ

ՈՍԿԵԲԵՐԱՆ Ա.ՔՍՈՐԵԱԼ

Յ. Տ. 404—407



Այն ինչ իմացուեցաւ թէ յաքսոր պիտի
երթայ Ռակեբերան, անհամար մարդիկ եկան
լսել նորա հրաժեշտի ողջոյնը։ Յոյժ սրտա-
շարժ էր տեսարանը. 40 եպիսկոպոսունք պա-
տաճ էին բոլորափքը և կուլային իբրև զտղայս։
Սարկաւագուհին Ռդիմպիհագա ուրիշ սարկա-
ւագուհիներով հանդերձ ոտքը կը փարէր.
աչք չէր մնացած որ չարտասուէր։ Կարի յուղ-
ուեցաւ Ռոկեբերան և թէպէտ ինքն ևս լա-
ցաւ, բայց տակաւին քաջաբար կը յորդորէր
և կը միսիմարէր զնոսա։ Յամին 404 յունիս
20ին, վերջին հրաժեշտն առաւ իւր մտերիմ-
ներէն, յորդորեց զանոնք որ չտարածայնեն
իւր երթը, զի մի գուցէ խորոշութիւն ծագէր։

և մտաւ ինաւ որ ընդ հուպ սահեցաւ, թռաւ
և աներեղիթ եղաւ Պրոպոնտեայ ալեաց մէջ։
իւր տկաբութենէն կազդուրուելու համար հա-
զիւ երկու շաբաթ թոյլ տրուեցաւ նմա կենալ
ի նիկիա։ Պաշտօնեայք որ յանձն առած էին
յաքսոր վարել զնա, սկսան ստիպել, ըսելով,
“Այս անդամ հեռուն պիտի տանինք գքեղ,
հեռուն, ի կոկիւառն։” Յուլիս 4ին ելաւ ի
նիկիոյ, և մինչև ի կեսարիա 25 օր տևեց
ճամբորդութիւնը, որ սարսափելի էր ա-
մառուան տօթագին եղանակին մէջ։ այսու
ամենայնիւ շրջակայից բնակիչք բաւական
մարդասիրութիւն ցոյց կու տային։ Բոլոր իւր
աքսորանաց ճամբորդութեանց վրայ կը տե-
ղեկանանք մանրամասնօրէն իւր նամակներէն
զորս կը գրէր իւր բարեկամաց, թէ՛ ճամբու
վրայ իշեաններէն և թէ՛ աքսորավայրէն։
250ի շափ նամակ մնացած է իւր այս ժա-
մանակի թղթակցութիւններէն (*)։ Առ Ռդիմ-
պիհագա ուղղած մէկ նամակին մէջ կ'ըսէ,
“Հայեր և ուրիշ ազգեր վրաս գթալով մեծ
մարդասիրութիւն կը ցուցնեն ինձ։” Թէպէտ
իւր թղթակցութեանց մէջ գոհունակութիւն
կը յայտնէ, բայց տարակոյս չկայ թէ մեծ նե-
ղութիւններ քաշեց։ Միշտ սովոր էր ըսել,

(*) Թէրեւս անդէպ չէ աստանօր յիշել թէ բազում ինչ
կը պարտիմք չ. Ղեռնդ Ալիշանի Յուշիկին՝ Ռակեբերանի կեն-
սագրութեան այս վերջին մասին նկարագրութեան համար։

“Փառք քեզ, Աստուած, յաղագս ամենային
փառք քեզ:” Այս իւր սիրելի ոճն էր:

Զերմէ բռնուած և տկարացած հասաւ
ի կեսարիա, որոյ մի անձանօթ անկիւնը խեղճ
տեղ մը իջևանեցաւ: Ի սկզբան բժիշկ և օդա-
նական չգտաւ, բայց ընդ հուպ ամբողջ քա-
ղաքը դղրդեցաւ: Փարետրիոս, քաղաքին արք-
եպիսկոպոսը, Ոսկերերանի թշնամեաց կողմէն
էր, և բնաւ չերևցաւ անոր: Երկրորդ օրը քա-
ղաքին կղերականք և վանականք պաշարեցին
տունը որպէս զի վոնտեն զՊսկերերան: Քաղա-
քին կառավարիչը գթաց: աղաչեց զՓարետրիոս
թոյլ տալ նմա հանգիլ մինչև որ գոնէ հի-
ւանդութենէն առողջանայ: ճար չեղաւ: Եր-
րորդ օրը, մինչ ջերմով բռնուած էր Ոսկերե-
րան, կէս աւուր սաստիկ տօթին ստիպուե-
ցաւ ճամբայ ելլել: Բարեպաշտ կին մը հրա-
ւիրեց զնա իւր ամարանոցը որպէս զի կազ-
դուրուի: Մինչ կէս գիշերին հանդիստ կը
քնանար անդ, յանկարծ իւր ընկեր քահա-
նայն արթնցուց զնա գոչելով. “Ելիր, ելիր,
բարբարոսները կու գան:” Այն ժամանակ այն
կողմերն իսաւրացի ըսուած լեռնական աւա-
զակներ կային որ սարսափելի յելուզակներ
և հուղկահարներ էին: Լուսին չկար. մա-
ռախլապատ մութ գիշեր էր: Կը վախնային
լոյս վառելէ զի մի գուցէ աւազակները տես-
նէին: Հատ տեղեր ձիէն վար ինկաւ Ոսկե-

բերան: Կը փախչէին որ իսաւրացւոց ձեռքը
չիյնային. բայց իրողութիւնն այն էր որ ո՛չ
իսաւրացի կար, ո՛չ բան: Եպիսկոպոսին մի
մեքենայութիւնն էր այս որ անհանգիստ ընե-
լով ի փախուստ ատիպեց զՍուրբն. վասն որոյ
իրաւամբ կը գրէ նա. “Ո՛չ իսաւրացիներէ և
ո՛չ ուրիշ ու ե մէկէ մը այնչափ կը վախնամ
որչափ եպիսկոպոսներէն:”

Այսպիսի տառապանօք կ. Պոլսէ ելնելէն
իբր եօթանասուն օր ետքը հասաւ իւր աք-
սորավայրը, ի կոկիւսոն, որոյ անունէն անդամ
կը սոսկար. բայց նորէն կ'ըսէր, “Փառք քեզ,
Աստուած, յաղագս ամենային փառք քեզ:”
կոկիւսոն, ըստ ամենայն հաւանականութեան,
հիմակուան կէօքսիւն ըսուած տեղն էր, կամ
անոր մօտ տեղ մը, որ կը գտնուի Մարաշէ^{գէպ} հիւսիս Հաճնայ և Զէյթնոյ մօտ, շրջա-
պատեալ Տաւրոս լեռներէն, ուր ձմեռը ցուրտ
է, ամառը տօթագին:

Այն ատեն Հայեր կը բնակէին հոն, վասն
որոյ Ոսկերերան “Հայարնակ”, կ'անուանէ զայն: իբր 100 նամակ ունի անկէ գրուած առ զնա-
զան անձինս: Մէկ նամակին մէջ առ Ողիմպիա-
դա սապէս կը գրէ. “Հոս շատ մարդասէրներ
գտայ, հիւանդութիւնս փարատեցաւ. ա՛լ լսւ
եմ:” Այդ բարեկամաց դիմաւորն էր Սոպատ-
րոս անուն Հայ իշխան մը զոր շատ կը գովէ
Ոսկերերան: Ուրիշ աւելի սերտ մտերիմ մը

գտաւ յանձին Դիոսկորոսի, Հայ եկեղեցականին, որ այն կողմի Հայոց վարդապետն կամ առաջնորդն էր։ Սա, լսելով Ոսկեբերանի գալուստը, մարդ զրկեց մինչև ի կեսարիա և հրափրեց իւր տունը ուր զնա հիւրնկալեց ամենայն սիրով։ Ուրիշ շատ Հայեր պատուած սիրեցին զԱսկեբերան։ Ամէն կողմէ ընծաներ կու գային անոր, մինչև խոկ կանայք իրենց զարդերը, ոսկի, արծաթ, և այլն կ'ընծայէին անոր. վասն որոյ իւր նամակաց միջոցաւ յատուկ կը պատուիրէր որ այլ ևս ընծայ չըրկեն իրեն։ Ընդունած ընծաներն ալ կամ աղքատաց կու տար, կամ խաւրացւոց ձեռքէն գերիներ աղատելու կը ծախսէր և կամ սովլեց կը բաշխէր, վասն զի սյն ժամանակ սովեղաւ այն կողմեր։ Ամառը և աշունը շատ առողջ անցուց. բայց ձմեռը, զոր հայկական ձմեռ կ'անուանէ, շատ խիստ էր իւր փափուկ կազմուածքին համար։ Գրեթէ երկու ամիս շարունակ յանկողին ինկած մնացած էր հիւնդ։ Շատ տխուր նամակներ ունի գրած այս միջոցիս։ “Մարմինս և ոչ մէկ բանէ այնպէս կը չարչարուի,,,” կը գրէ մէկ նամակին մէջ, “ինչպէս ցուրտէն. և չկայ բան մը որ այնպէս օգտակար լինի ինձ ինչպէս ամառն։”

“Գեղարդը պարկի մէջ չպահուիր, ” կ'ըսէ առածը։ Ոսկեբերանի պերճախօսութիւնը և Քրիստոնէական եռանդը հոն ալ սկսաւ գործ

աեմնել։ Շրջակայ գիւղօրէից բնակչաց մի մասը կուապաշտ էր տակաւին։ Ոսկեբերան իւր քարոզներով մեծ արթնութիւն յառաջ բերաւ։ Շատ նորահաւատներ մկրտուեցան, և այն լեռնականաց լեզուին թարգմանել տուաւ Աստուածաշունչը։ Ոմանք ասկէ հետեցուցին թէ Ոսկեբերան էր հայկական այբուբենի գտիչը. և տակաւին վատիկանի մէջ կայ հաւաքածոյ մը զանազան ազգաց այբուբեններն հնարող անձանց, և այդ խմբին մէջ Ոսկեբերան նկարուած է հայ այբուբենն ի ձեռին։ Բայց կարճ խօսելով, որչափ ալ իմաստուն և բազմահմուտ լինի Սուրբն Ոսկեբերան, սա անուրանալի է թէ հարազատ Հայ մը միայն կընար լինել հայկական սքանչելի այբուբենից գտիչ։ Զարմանալին սա է որ մինչ Ոսկեբերան զկոկիւսոն կը լուսաւորէր, նոյն պահուն կամ խուն ինչ յետոյ, Մեսրովալ հնարեց հայկական այբուբենը, յամին 406։ Մեղ Հայոցս համար, ուրիշ շահեկան մի բան Ոսկեբերանի մէկ ճառն է, զոր խօսեցաւ ի գովեստ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի՝ նորա մի տօնախմբութեան առթիւ, մինչ ի կոկիւսոն էր։ Ասոր յունարէն բնագիրը չգտնուիր այսօր, վասն որոյ ոմանք կը նկատեն զայն անհարազատ բայց Ժբարուն մէջ, Շնորհալւոյ ժամանակ, թարգմանեցաւ ի հայ բարբառ։ Շատ համբաւ հանեց Ոսկեբերան ի կոկիւ-

սոն իսկ։ Ամեն կողմէ — Կ. Պոլսէ, Անտիռքէ՝ իւր հայրենի քաղաքէն — ամէն ազգէ մարդիկ ուստի կ'երթային հոն անդամ մը ևս տեսնել զնա։ Բայց յանկարծ նեղութիւնը վրայ հասաւ։ 406ին սկիզբը խաւրացիք յարձակեցան կոկիւսնի վրայ։ Ոսկերերան ստիպուեցաւ ձգել իւր տաքուկ խցիկը և թափառիլ սառնամանեաց, անտառաց և քարայրից մէջ։ Շատ նեղութեամբ հասաւ յԱրարիսոն, որ 40 մղոն գէպ արևելք էր կոկիւսնէ, այժմու Եարփուղ ըսուած տեղւոյն մօտ։ Մեծ նեղութեան մէջ էր հոս, բայց տակաւին կը թըղթակցէր բարեկամաց հետ, մինչև իսկ ֆիւնիկեցի Քրիստոնէից հետ ընդ որս ի վաղուց հետէ բարեկամութիւն հաստատած էր։ Իսկ յայնժամ խոռվութիւն ծագած էր նոցա մէջ, վասն որոյ կը խրատէր զանոնք հաշտ ապրիլ իրարու հետ։ Գիշեր մը 300 զինեալ խաւրացիք յանկարծ յարձակեցան բերդաւանին վրայ ուր Ոսկերերան պատսպարուած էր։ Ամեն ոք ահ ու դողի մէջ էր։ Ոսկերերան կը պատրաստուէր կրել ուրիշ յաւելւալ տառապանք ևս։ Բարերադարձար հրոսակները մինչև առաւօտ չմնալով ցեր և ցան եղան։

Ոսկերերանի Կ. Պոլսէ աքսորուելքն քիչ ետքը մեռաւ Եւդոքսիա կայսրուհին որ անոր գլխաւոր թշնամին եղած էր, և որոյ մասին կը գրէր Ոսկերերան։ “Եթէ ուզէ, թող աք-

սորէ զիս կայսրուհին։ Երկիր Տեառն է լրիւ իւրով։ Եթէ սղոցել տայ զիս՝ կը յիշեմ զեսայի, Եթէ խեղզել տայ զիս՝ միտքս կու գայ Յովնան, Եթէ գազանաց առջեւ նետէ զիս՝ զիանիէլ ունիմ աչացս առջեւ։” Փոխանակ մեղմանալու, օր քան զօր առաւել բուռն և խիստ եղան Ոսկերերանի թշնամիք։ Խորհեցան թէ կոկիւսնի և Արարիսոնի Հայք չափազանց մարդասէր գտնուեցան առ նա. վասն որոյ որոշեցին որ անկէ ալ աքսորուի, հեռուն, Հռոմէական պետութեան յետնագոյն սահմանը, ի լազուտան, Սև ծովուն եղբն ի Պիւտինտ, որ կը կարծուի թէ այժմու թիյունտա ըսուած տեղն էր կովկաս լերանց ստորոտք։ Յայնժամ Քրիստոնեայ աշխարհին յետնագոյն ծայրը կը սեպուէր այդ տեղ։ Ուր որ ուզէին տանէին, բայց գէթ մարդասիրաբար վարուէին անոր հետ։ Նա հիւանդ էր։ 407 յունիս ամայ կէսն էր. Փոքր Ասիա սկսած էր տաքսալ։ Կոկիւսնէ մինչև ի Պիւտինտ 600 մղոն է։ ճամբայ չկայ. բոկոտն և հետի պէտք է երթալ։ Մերթ ձիւնապատ սառեցուցիչ լեռներէ կ'անցնէին, մերթ գժոխային տաքութեամբ հրաբորոք դաշտագետիններէ։ Մանաւանդ աքսորավար զինուորք յատուկ պատուէր ստացած էին, Պիւտինտ չհասուցած, ճամբան լմնցնել Ոսկերերանի գործը։ Երեք ամիս շարունակ քալեցուցին զնա. չին թողուր

որ լուար զովայնէր խեղճը իւր յոդնած սրունքները, երբ դեռ մը հասնէին : Անցնող դարձող անծանօթներ անգամ, եթէ երբեք դըտնուէին, կը խղճային եղկելւոյն վրայ, կ'աղաշէին զինուորները որ այդչափ խատութեամբ չվարուին . բայց անօգուտ : Արդէն մարմնով փոքր և տկարակազմ էր, և այդ ժամանակ տարիքն ալ առած : Թէև 60 տարեկան էր, բայց սաստիկ վիշտը շատ աւելի ծերացուցած էր զնա : Գլուխը ճաղատ էր, և անողորմ զինուորներ կէս օրուան տաքուն կը քաշէին կը հանէին գլխարկը որ արևուն ճառագայթից տակ այրէր չարաչար : Երբեմն ալ մինչ անձրեսը սաստիկ հեղեղանման կը տեղար՝ ճամբայ ընել կուտային անոր գլխարաց և անպատճառ, այնպէս որ վրան մէկ թել չոր չէր մնար : Բայց նա պողպատէ սիրտ և աղամանդէ կամք ունէր . կը կրէր ամէն բան առանց երբեք տրանջելու : “Փառք քեզ, Աստուած, յաղագս ամենայնի փառք քեզ, ” կ'ըսէր ու կը կրկնէր :

Այս կերպով եկան մինչև կոմանա կոչուած գիւղաւանը որ Եւդոկիա քաղաքէն 7-8 մղոն հեռի էր, և որ մինչև հիմա ծանօթ է կիւմէնք անուամբ : Հոս էր Բատիլիսկոս վկային գերեզմանը, որոյ վրայ մատուռ ևս շինածէին : Բասիլիկոս բնիկ Անտիոքացի էր, հայրենակից Ոսկեբերանի : Սեպտեմբեր 13ի դիշերն հոն իջևանեցան : Զափազանց յոդնած և

տկարացած էր Ոսկեբերան . առաւօտուն աղաչեց զինուորներն որ քիչ մը ուշ ենեն ճամբայ, այնպէս որ ինքն աղօթէր այն սուրբին վկայարանին մօտ : Այս փոքրիկ խնդիրն անգամ մերժուեցաւ . “0ն, քալէ՛, ” և քաշքըրտելով ստիպեցին զնա քալել խորտաբորտ տեղերէ իբր 3-4 մղոն ևս : Սակայն երբ տեսան որ ա՛լ չէր կրնար քալել և ընդհուպ պիտի մեռնի, ստիպուեցան դառնալ բասիլիսկոսի վկայարանը : Ոսկեբերան զգաց թէ մահը մծանեցած էր . բոլոր ոյժը ժողվեց, ճերմակ հագուստներ ուղեց, զոր չնորհեցին նմա . հանեց պատառատուն ցնցուտիները, և յոտից ցգլուխ համակ սպիտակ հագաւ, ինչպէս յայնժամ սովորութիւն էր հագուեցնել մահամերձները : Իւր վերջին աղօթքն արտասանեց և աւանդեց հոգին ի սեպտեմբեր 44, 407 : Իւր սուրբ Հրթներէն չսուեցան դանդատանաց խօսքեր . իւր վերջին մրմունջն էր, “Փառք քեզ, Աստուած, յաղագս ամենայնի փառք քեզ : ” Պատահմամբ այն օր յուխտ եկած էր ի կոմանա մեծ բազմութիւն, որք մեծ հանդիսիւ թաղեցին զՈսկեբերան : Նորամահուան լուրը մեծ աղդեցութիւն դորձեց իւր Պոլսերնակ բարեկամաց վրայ . թշնամիք անգամ սկսան ամնալ, և տակաւ առտակաւ զգացին սոյն կորստեան մեծութիւնը :


իւր մահուանէն 31 տարի ետքը, կ. Պոլսոյ Պրոկլ պատրիարքը մեծ բազմութեան առջև ներբողական ճառ մը խօսեցաւ Ոսկեբերանի վրայ, նկարագրելով անոր մեծամեծ ծառայութիւններն և արժանիքը։ Մեծ յուզում՝ յառաջ եկաւ ժողովրդեան մէջ որք կը պահանջէին Ոսկեբերանի գէթ մարմինը բերել կոմանայէ ի կ. Պոլիս։ Կայսրը, փոքրն թէու դոս, որ Ոսկեբերանի ձեռօք մկրտուած էր, կը փափաքէր բերել տալ նորա ոսկիները։ Վասն որոյ յատուկ մարդ զրկուեցաւ ի կոմանա, յորմէ մինչև ի Քաղկեդոն արժանայարդ Քահանաներ իրենց ուսոց վրայ բերին ոսկիները։ Անտի յոյժ շքեղ հանդիսիւ տարուեցաւ ի կ. Պոլիս, ուր ամփոփուեցաւ Առաքելոց եկեղեցւոյն մէջ յամին 438, յունվար 27։

Մեծ պերճաբան հրապարակախօս էր Սուրբ Յովիշան Ոսկեբերան։ Եթէ չէր գերազանցեր զիեմոսթենէս և զկիկերոն, ետ ալ չէր մնար անոնցմէ հռետորական արուեստին մէջ։ Իսկ իւր ամբողջ կեանքն է մեծագոյն պերճախօսութիւն մը որ նկարագիրն է ճշմարիտ Քրիստոնէի, Քրիստոնէի՝ որ քայլ առ քայլ կը հետեւի իւր մեծ վարդապետին։ Իւր գրութեամբք եղական մնացած է Ոսկեբերան ի մէջ նախնի եկեղեցական մատենագրաց։ Կ'ըսուի թէ մեկնաբանական քարոզներ խօսած է ամբողջ Աստուածաշնչի վրայ, Ծննդոց գիրքէն սկսեալ

մինչև ցՅայտնութիւն։ 800 հատոր գիրք և 12,000 ճառ կամ քարոզ դրած լինելը կ'ըսեն մեր հայկական Յայսմաւուրք։ «Պատմաբանող ճառից հազարաց երկոտասանից և բիւրաւորաց,, կ'ըսէ մեր գրիչներէն մին։ Ծնչուշտ ժամանակը սոցա բոլորն ալ չէ հասուցած առ մեզ։ Իսկ ինչ որ հասած է մինչև առ մեզ, այն իսկ կը կազմէ ահագին քանակութիւն։ Ծննդոց գիրքին վրայ 75 քարոզ, Սաղմոսաց վրայ 58, Մարդարէից վրայ 77, Գործոց վրայ 54, Պողոսի թղթոց վրայ 244 քարոզ։ սոքա միայն հատակոտորներն են իւր ընդարձակածաւալ մեկնութեանց։ Իւր գլուխ գործոցը կրնայ սեպուխլ Մատթէի մեկնութիւնը, որ ստուգիւ հրաշալի գրութիւն է։ Եթէ ցաւալի բան մը կայ, այն ալ սաէ թէ այս մեկնութեան հայկական թարգմանութիւնը, որ մեր գրականութեան ոսկեղինիկ դարուն մէջ կատարուեցաւ ի ձեռն մեր հանճարեղ և ժրաշան թարգմանչաց, ամբողջովին չէ հասած առ մեզ։ Բայց ինչ որ հասած է, բաւ է գաղափար տալ թէ՛ հեղինակին և թէ՛ թարգմանչին մեծ կարողութեան վրայ։ Մեր նախնիք ի հայ բարբառ թարգմանեցին նաև Ոսկեբերանի գրութիւններէն Պողոսի թղթոց մեկնութիւնը, Յաղագս Քահանայութեան գիրքը, Յովհաննու մեկնութիւնը, ճառերէն զոմանս, և Եսայեայ

մեկնութիւնը։ Այս վերջնոյս բնագիրը կորսուան
լինելով, Ոսկեբերանի սոյն երկասիրութիւնը
միայն մեր նախնեաց անխոնջ աշխատութեամբ
հասած է մեր դարուն։ Մօտ տարիներս չա-
յերէնէ ի լատին ալ թարգմանեցին զայն մեր
արդի ուսումնականք։ Սոյն հայ թարգմա-
նութեանց վրայ պարտիմք յաւելու և ճառն,
զոր խօսեցաւ ի գովեստ Սբ. Լուսաւորչին մե-
րոյ, և որ արդէն հայկական բուրումն ունի
ծայրէ ի ծայր։

Իբրև վերջաբան քիչ բան կը մնայ մեղ ը-
սել։ Ստուգիւ հրաշալի անձ էր Սբ. Յովհանն
Ոսկեբերան։ Թէպէտ 1,500 տարիներ անցած
են յորմէ հետէ գրեց կամ ճառեց նա իւր
քարոզներն և մեկնութիւնները, այսու ամեւ-
նայնիւ այսօր չկայ Սբ. Գրոց մեկնիչ մը, որ
չդիմէ նախ սոյն ոսկեղինիկ հրաշագեղ գրուա-
ծոց իւրեւ անսպառ աղբիւրի։ Կ'արժէ որ
մէն մի երիտասարդ փափաքի ապրիլ և
գործել այնպէս որպէս ապրեցաւ և գործեց
ՍՈՒՐԲՆ ՅՈՎՀԵՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ։



1981
1982
1983
1984

ՀՀ Ազգային գրադարան



NL0028932

ՀՀ Ազգային գրադարան



NL0028931

ՀՀ Ազգային գրադարան



NL0028930

ՀՀ Ազգային գրադարան



NL0028929

8-30

1925

1928

